



ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 18-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱՌԻԹՈՎ


Մեր ժողովրդի և, մասնավորաբար, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու համար կան նվիրականացած ու «աղոթք դարձած» տոնակատարություններ, որոնք միշտ էլ եկեղեցասիրական ու հայրենասիրական նոր ուժ, նոր ավյուն են հաղորդում մեր հավատացյալ ժողովրդին: Այսպիսի նշանակալից տոներից է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության տարեդարձները:

Այս տարի նույնպես, ինչպես միշտ, Մայր Աթոռում, հանդիսավոր պաշամաներում և խանդավառ մթնոլորտում, նշվեց Վեհափառ Հայրապետի բարեբաստիկ գահակալության 18-րդ տարեդարձը:

Գահակալության հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ իր անմիջական գործակից տ. Գյուտ ծ. վրդ. Նազաշյանի հետ՝ Ֆրանսիայից, Լոնդոնի ա. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և Տորոնտոյի հայոց ա. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշնյանը:

Ներքին թեմերից Մայր Աթոռ էին ժամանել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, վրահայոց առաջնորդական տեղապահ տ. Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանը, Ծիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը և ներքին թեմերի թեմական խորհուրդների ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետի գահակալության 18-րդ տարեդարձի առթիվ ժամանել էին նաև Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքճյանները, Հակոբ Էսեֆյանը՝ Լոնդոնից, պրն. Կարպիս Զրբաշյանը իր տիկնոջ և քրոջ՝ Ալիս Մոմջյանի հետ՝ Փարիզից, տեր և տիկին զո-



րավար Արամ Գարամանուկյանը՝ Բեյրութից, Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ Օճնիկ Ասլանյանը իր տիկնոջ հետ:

Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 18-րդ տարեդարձի առթիվ 1973 թվականի սեպտեմբերի 29--30 օրերին Մայր Աթոռում տեղի են ունենում հետևյալ հանդիսությունները.

- ա) Մայր տաճարի նոր զանգակների օրհնություն,
- բ) Հայրապետական ա. պատարագ և եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր տաճարում,
- գ) Շնորհավորություններ գահասրահում,
- դ) Պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ Վեհաքանում:

ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻ ՆՈՐ ԶԱՆԳԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ձայն փողոյն» (զանգի) «հնչէր մեծաձայն» (Ելք. ԺԹ 13) և «լերկինս ելանէր» (Ա. Մակ. Ե 31):

Սեպտեմբերի 29-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով հանդիսավորապես իջնում է Մայր տաճար:

Տաճարի դռան առջև, զանգակատան կամարների ներքո, կատարվում է Մայր տաճարի նոր զանգերի օրհնության կարգը՝ ա. գրական ընթերցումներով, շարականներով, աղոթքներով և օրհնությամբ:

Փարիզաբնակ Կարպիս Զրբաշյանը և իր քույրը՝ տկն. Ալիս Մոմջյանը, ի հիշատակ իրենց հանգուցյալ ծնողների, Մայր տաճարին նվիրել էին ինն ոսկեփայլ զանգակներ՝ պատրաստված Ֆրանսիայում:

Այդ օրը հանդիսավորապես հնչեցին Մայր տաճարի նոր զանգերը:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ բնիկ վասպուրականցի Մկրտիչ և Վեհանուշ Զրբաշյանների:

Վեհափառ Հայրապետը Իր օրհնության խոսքի մեջ մասնավոր կերպով շեշտում է, որ Մայր տաճարի այս նոր և ոսկեփայլ զանգակները «պարզևս կհանդիսանան վասպուրականցի Կարպիս Զրբաշյանի և նրա քրոջ՝ Ալիս Մոմջյանի, որոնք թեև ապրում են Փարիզում, բայց հոգով մեզ հետ են, այստեղ, հայրենի հողի վրա: Այս զանգակները պետք է հնչեն հետ այսու, ի հիշատակ նրանց վանեցի ծնողների՝ Մկրտիչի և Վեհանուշի, որոնք իրենց աչքերը փակեցին պանդխտության մեջ, հեռու Աղթամարից, սակայն երազանքներով լեցուն: Ահա այդ երազանքների ճանապարհի վրա նրանց-զավակները այսօր՝ Կարպիս և Ալիս, արտահայտում են իրենց զգացմունքները դեպի Մայր Աթոռ ա. Էջմիածին և դեպի մայր հայրենիք՝ նվիրելով այս զանգերը, որոնք պետք է ուրախացնեն ոչ միայն մեզ, այլև այն բոլոր ուխտավորներին, որոնք պետք է սերունդե սերունդ աղոթքի գան Մայր Աթոռ ա. Էջմիածին: Այդ զանգերի ձայնը ինչ-որ չափով պետք է մխիթարի և թեթևացնի նաև սուգը կիսավեր Աղթամարի»:

Արդարև, Մայր տաճարի այս նոր զանգերի մեջ դրվանջելու են Աղթամարի և Արևմտյան Հայաստանի մեր հազարավոր վանքերի և տաճարների հավետ լուսավոր զանգերը:

Մայր տաճարի նոր զանգերի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Սուրբ Էջմիածնի
նուէր
Կարպիս-Ռոմէ Զրբաշեանից
ի յիշատակ
իր հանգուցեալ ծնողաց
վանցի
Մկրտիչի և Վեհանուշի
1972

թ. »:

Այս նվերը հայ հավատքի, հայ ժողովրդի երկյուղած բարեպաշտության և հայրենասիրության անլուելի զանգը պիտի լինի:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, Իր բարձր գնահատությանն արժանացնելով Կարպիս Զրբաշեանի սույն սրտաբուխ նվիրատվությունը, նրան շնորհեց ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշան:

**ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՌՈԺԷ-ԿԱՐՊԻՍ ԶՐԲԱՇԵԱՆԻՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ**

Փ Ա Ր Ի Ջ

Ողորմութեամբն Աստուծոյ Ամենակալին մեր օրերին աւելի ու աւելի է պայծառանում ու շքեղանում Միածնաէջ Մայր տաճարը ամենայն հայոց, որդիական սիրովը և հոգատարութեամբը մեր հաւատաւոր ժողովուրդի:


Մեր ժողովուրդի արժանատր զաւակների հոյլին էք պատկանում նաև Դուք ազգանուէր Ձեր ողջ գործնէութեամբ Ֆրանսայում և Ձեր նուիրումով դէպի մեր լոյս հաւատքի աղբիւր՝ սուրբ Էջմիածին:

Այսպէս է որ Ձեր և Ձեր ազնուափայլ քրոջ՝ տիկին Ալիս Մոմջեանի սրտաբուխ նուիրատուութեամբ, Մայր տաճարս օծտունց ինն նորակերտ բարձրորակ զանգակներով, ի յիշատակ Ձեր բարեպաշտ ծնողաց՝ լուսաբնակ Մկրտիչ և Վեհանուշ Զրբաշեանների, որոնք իրենց աչքերը փակեցին պանդխտութեան մէջ, հեռու իրենց հայրենի Վան քաղաքից:

Մենք ջերմօրէն գնահատելով Ձեր և Ձեր ազնիւ քրոջ մեծարժէք պարգեւը, այսու Մեր կոնդակաւ կը յղենք Ձեզ Մեր հայրապետական օրհնութիւնը, շնորհելով Ձեզ սուրբ Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանը և մաղթելով Ձեզ և Ձեր ընտանեաց անդամներին՝ ամէն բարիք ի Տեառնէ, արևշատ խաղաղ տարիներով:

Թող Աստուած միշտ լինի Ձեզ պահապան և օրհնութեամբ լցնի Ձեր կեանքն ու Ձեր ձեռաց գործերը:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:



**ՄԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱՌՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուա կոնդակա ի 10-ը հոկտեմբերի

1973 փրկչական ամի,

և ի սումարիս հայոց ՌՆԻԲ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՐ. 755

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ
ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ**

Սեպտեմբերի 30-ին, կիրակի, Վարագա ա. Խաչի տոնի օրը, Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսը և եպիսկոպոս ձեռնադրում չորս երիտասարդ, շնորհալի և խոստումնալից վարդապետների՝ տ. Գյուտ ծ. վրդ. Նազաշյանին, տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանին, տ. Նարեկ վրդ. Ծաբարյանին և տ. Գևորգ ծ. վրդ. Սերադարյանին:

Ծաբար օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է նորընծաների «ընտրություն և ուխտադրություն» ըստ սահմանի Հայաստանեայց եկեղեցույ: Իջման ա. սեղանի առաջ նորընծաները ուխտում են անխտոր և անաշխաք ընթանալ Հայաստանյայց առաքելական եկեղեցու ուղղափառ վարդապետության շալիով և հավատարիմ լինել «սրբոյ Էջմիածնի մինչև ցվախնան կենաց իրեանց կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյ, ծառայել երկիւղի Տեառն յօգուտ և ի փառս անուան սրբոյ Էջմիածնի»:

Երդումնագրի ընթերցումից հետո նորընծաները ստորագրում են այն, և Արարտյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն ու լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը վկայում են ուխտադրությունը:

Կիրակի առավոտյան, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, հայրապետական զգեստավորման մեջ, ամպհովանու ներքո, հանդիսավորապես, իջնում է Մայր տաճար՝ Իրեն առընթերակա եպիսկոպոսներ ունենալով տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին և տ. Վահան եպս. Տերյանին:

Մայր տաճարում, ա. Ստեփանոսի սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը բազմում է Աթոռի վրա, և սկսվում է ձեռնադրության կարգը: Ամենայն Հայոց Հայրապետը աղոթքով և օրհնությամբ նորընծաներին շնորհում է եպիսկոպոսական սրբազան յոթն աստիճանները:

Այնուհետև ա. պատարագը շարունակվում է Ավագ խորանի վրա, մինչև ժաշոց գրքի ընթերցումը, որից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Նորընծաները ծնրադիր, դեմքերը դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում են աշխարհից, մինչ Մայր տաճարի կամարների տակ հնչում է կոչման խորիմաստ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԳիտ, զԱրսէն, զՆարեկ և զԳէորգ վարդապետունս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Օրհնությունը կրկնվում է երեք անգամ, որից հետո Վեհափառ Հայրապետը կատարում է օծման սրբազան կարգը:

Ապա համապատասխան աղոթքներով նորընծա եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի՝ ի նշան եպիսկոպոսական իշխանության:

Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակ սրբազանների նակատները և, ներշնչված օրվա խորհրդով, Իր հայրական պատգամներն ու հորդորն է տալիս նրանց:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՐՈՋԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(1973 թ. սեպտեմբերի 30)

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր, Աստուծո ռդրմությամբ և սուրբ Հոգու միջնորդությամբ, Մենք՝ Հայրապետ Հայոց, Փրկչի իջման այս սուրբ տաճարի կամարների ներքո կատարեցինք մի սրբազան արարողություն և նույնքան սրբազան պարտականություն՝ ձեռնադրելով և օծելով չորս երիտասարդ վարդապետներ՝ Մայր Աթոռի միաբաններ, որոնք կանգնած են ահա Աստուծո առաջ և ձեր բոլորի առաջ, ուխտելով հավատարիմ մնալ իրենց նոր աստիճանին և կոչումին:

Սա մի բացառիկ արարողություն է, որին ականատես եղաք դուք, և կարծում ենք, թե դուք ևս իբրև ներկայացուցիչները համայն հայ ժողովրդի, Հայաստանից թե արտասահմանից, աղոթեցիք, որպեսզի Աստված ուժ և կարողություն և երկար կյանք պարգևի մեր նորապսակ եպիսկոպոսներին՝ Գյուտ եպիսկոպոս Նազաշյանին, որ ձեռնադրվեց Ֆրանսիայի թեմի վրա, Արսեն եպիսկոպոս Բերբերյանին, որ ձեռնադրվեց Մայր Աթոռի վրա, Նարեկ եպիսկոպոս Շաքարյանին, որ ձեռնադրվեց հայրենի Ծիրակա թեմի վրա, և Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին, որ ձեռնադրվեց վրահայոց, այսինքն Վրաստանի հայոց թեմի վրա:

Մենք, իբրև եկեղեցի և իբրև ժողովուրդ, ապրում ենք մեր պատմության ամենաբախտորոշ շրջաններից մեկը: Մի ժողովուրդ ենք, որ 1915 սև թվականին Մեծ եղեռնը տեսավ, երբ մեր հայրենի ազգաբնակչության համարյա կեսը կոտորվեց, երբ մեր պատմական հայրենիքի մեծագույն մասը քարուքանդ եղավ՝ իր հազարավոր սրբատեղիներով, իր հազարավոր գյուղերով և քաղաքներով: Թվում էր, թե հայոց ազգը արդեն մահվան գերեզման է մտել, և նրա մասին միայն պատմության մեջ պետք է հիշվեր: Թվում է իրապես այդպես, սակայն հայոց Աստվածը բոլորովին մոռացության չտվեց իր ընտրյալ ժողովուրդներից մեկին, աշխարհի ամենահին քրիստոնյա ժողովուրդներից մեկին, աշխարհի ամենահին քաղաքակրթյալ ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին: Եվ եղեռնից երեք տարի հետո նա Սարդարապատը նվաճեց՝ իր քաջ որդվոց սուրբ արյունով, և հարություն առավ մեռելներից: Վերածնվեց հայ ժողովուրդը և սկսավ քաղել նոր կյանքի ճանապարհով իր պատմական հայրենիքի մի մասի վրա հաստատելով հայկական նոր պետությունը, որ ավելի քան հիսուն տարիների ընթացքում վերաշինեց ու ծաղկեցրեց իր ավերված երկիրը աննախընթաց թափով, խաղաղության և ապահովության պայմանների մեջ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում: Եվ Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդին վերապահված են նաև այլ ուրախություններ և մխիթարություններ, որով պետք է արդարությամբ և փառքով պսակվեն հայ ժողովրդի բոլոր ազնիվ երազանքները:

Ավաղ, սակայն, եղեռնի իբրև արդյունք այսօր մեր ազգի գրեթե կեսը ապրում է յուր մայր երկրի սահմաններից դուրս և՛ իբրև եկեղեցի, և՛ իբրև ժողովուրդ: Ահա թե ինչու, ասում ենք, թե ապրում ենք մեր պատմության ամենաբախտորոշ շրջաններից մեկը, երբ մեզանից ամեն մեկին ընկնում է յուրահատուկ պարտականություն, որպեսզի բոլորս՝ մեր տեղերից, մեր դիրքերից, մեր միջոցներով, մեր պայմանների մեջ, կարողանանք մեր առավելագույնը ի գործ դնել՝ վերականգնելու, ամրացնելու և ծաղկեցնելու համար անցյալում նահատակված մեր եկեղեցին, ամրացնելու, գորացնելու և ծաղկեցնելու համար անցյալում նահատակված և հերոսացած մեր ժողովուրդը:

Այս իրադրության մեջ իր կարևոր դերն ունի նաև մեր հոգևորականությունը, այսինքն մեր եկեղեցու սպասավորները, ամենամեծից ամենափոքրը և ամենահամեստը: Անցյալում էլ մեր եկեղեցին իր կրոնական քարոզչության հետ զուգահեռ եղել է և մնացել պաշտպան հայրենյաց և առաջնորդ մեր ազգի, բառին բարոյական և մշակութային իմաստով: Եվ մեր լուսաբնակ հայրապետներից շատերը այս ոգով իրենց կատարած մեծ գործերի համար կոչվել են պաշտպան հայրենյաց: Այդ ոգին չի պատկանում միայն պատմության, այլ նաև մեր օրվին ապրող հոգևոր սպասավորներին: Եվ ահա այսպիսի իրադրության մեջ է, որ Մենք Մեր ձեռքը դրեցինք այս չորս երիտասարդների վրա և օժեցինք նրանց եպիսկոպոս, որպեսզի նրանք, հետևելով իրենց նախնյաց հավատքին և կյանքի ճանապարհին, մինչև իրենց կյանքի վերջին շունչը մնան պաշտպան քրիստոնեական հավատքի, դաստիարակ ժողովրդի, և միաժամանակ՝ պաշտպան մայր հայրենիքի:

Ահա պատվերը, որ տալիս ենք Մենք այսօր այս սուրբ բեմից և հավատում ենք, որ նրանք, իբրև հավատարիմ զինվորները մեր սուրբ եկեղեցվո, այս ուխտից, այս առաքելությունից երբեք չեն բաժանվելու, կյանքի ինչպիսի էլ պայմանների մեջ գտնվեն այստեղ կամ արտասահման, որպեսզի արժանի դառնան Աստուծո օրհնության և մեր ժողովրդի գնահատանքին:

Սիրելի նորապսակ սրբազաններ, թող մեր հայրերի Աստվածը լինի ձեզ միշտ պահապան, օգնական և մարտակից, և դուք բաց ճակատով, անձնագոհությամբ, ազնվությամբ, առավելագույն ջանասիրությամբ կատարեք ձեր պարտքը, ձեզ բաժին ընկած աշխատանքը:

«Ողջ լինեք գորացեալ սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

ԾՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափուրով առաջնորդվում է Վեհարանի գահաարան:

Եկեղեցական թափորին հետևում են Մայր Աթոռի հյուրերը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հայաստանյայց ս. եկեղեցու հոգևորականության և հայ հավատացյալների անունից, գահակալության 18-րդ տարեդարձի առթիվ, Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհավորական ջերմ խոսք է ասում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը.

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
ՆՐԱ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 18-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻ ԱՌԹԻՎ
(1973 թ. սեպտեմբերի 30)

«Վեհափառ Տեր,

Թույլ տվեք, որ հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Հայաստանյայց եկեղեցվո բոլոր հոգևոր դասուն, ինչպես նաև համայն հայ ժողովուրդին սրբապաշտ շնորհավորել Ձեզ՝ Ձեր գահակալության տասնութերորդ բարեբաստիկ տարեդարձին առիթով:

Վեհափառ Տեր, այսօրվան գահակալության տարեդարձը բովանդակալից և պատմական կրթունա անով, որ այս առիթով բարեհաճեցիք Հայաստանյայց եկեղեցվո շնորհել չորս երիտասարդ, զարգացած և նվիրյալ եկե-

ղեցականներ և այդպիսով մեր եկեղեցին ավելի թարմացուցիք և ավելի երիտասարդացուցիք:

Վեհափառ Տեր, այս Հաստատությունը՝ ս. Էջմիածին Մայր Աթոռ, տասնըրորս դարերու պատկառելի և պատվական հաստատություն մըն է: Դարերու ընթացքին մեր ժողովուրդը ինչ որ ունեցած է իբրև լավագույն, դրած է մեր եկեղեցիին և, մասնավորաբար, Մայր Աթոռ ս. Էջմիածնին մեջ: Անհկա ալլա հայ ժողովուրդի և նույնիսկ ամբողջ քրիստոնեական պատմության առջև նվիրականացած և սրբացած հաստատություն մըն է: Տասնըրորս դարերու ընթացքին հարյուր երեսուն հոգելից, աստվածարյալ և ազգասեր հայրապետներ բազմած են այս սուրբ Աթոռին վրա: Այդ հայրապետներեն յուրաքանչյուրը իր միտքին և հոգիին շնորհները ավելցուցած է այս հաստատության վրա, և այս հաստատությունը դարերու ընթացքին ճոխացած, զարգացած, նվիրականացած և սրբացած և նույնացած է մեր ժողովուրդի հոգիին և մեր ժողովուրդի պատմության հետ:

Վեհափառ Տեր, Դուք այդ հարյուր քսանինն իմաստուն հայրապետներուն արժանավոր հաջորդն եք, և այս տասնութ տարիներու ընթացքին Ձեր միտքի և Ձեր հոգիի շնորհները դրոշմած եք այս հաստատության վրա: Տասնութ տարիներու ընթացքին վերածնունդ մը ունեցած է Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Վերածնունդ՝ հոգևոր կյանքին մեջ, վերածնունդ՝ մշակութային, կրթական կյանքին մեջ, վերածնունդ՝ շինարարական մարզին մեջ, որուն վրա Ձեր գեղարվեստական հասկացողությունը և Ձեր միտքին դրոշմը կերևի ամեն կողմ:

Վեհափառ Տեր, այսօր, այս փոքրաթիվ հայությունը, որ այստեղ կզըտնըվի, միայն ասոնք չեն, որ Ձեզի պիտի շնորհավորեն, Ձեզի պիտի մաղթեն առողջ և երկար կյանք և առավել ևս արդյունավոր գործունեություն: Վստահ եղեք, որ այսօր ա՛յս վայրկյանին աշխարհի մեջ ցրված ամբողջ հայությունը, ամբողջ կըսեմ, իրենց զգացմունքներով, իրենց միտքով, իրենց հոգիով փոխարկված են Մայր Աթոռ ս. Էջմիածին, կմտածեն և կաղոթեն Հայաստանյայց եկեղեցվո պայծառության և Մայր Աթոռ ս. Էջմիածնի հավերժության համար և Ձեր Վեհափառության երկար առողջ, առավել ևս արդյունավոր կյանքին համար:

Ծնորհավոր ըլլա Ձեր գահակալության տասնութերորդ տարեդարձը, և մենք և ամբողջ հայ ժողովուրդը երջանկությունը և բարեբախտությունը ունենանք շատ մը այսպիսի գահակալության տարեդարձներ տոնելու:

Այնուհետև Հայոց Հայրապետին շնորհավորում է Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱԺԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
ՆՐԱ ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ 18-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻ ԱՌԹԻՎ
(1973 թ. սեպտեմբերի 30)

«Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք Հայաստանի կառավարության անունից, կառավարության առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից այսօր սրտանց շնորհավորել Ձեզ՝ Ձեր գահակալության 18-րդ տարեդարձի առթիվ,

կամենալ Ձեզ քաջատողջություն, եռանդ, կորույլ և հետագա գործունեության ընթացքում Ձեզ նորանոր հաջողություններ:

Չափազանց ուրախ ենք տեսնելով, որ տասնութ տարիների եռանդուն գործունեությունից հետո Դուք այսօր ավելի կորույլի, ավելի եռանդով, քաջատողջության մեջ բազմած եք ս. Էջմիածնի գահին և շարունակում եք հաջողությամբ Ձեր բարձր առաքելությունը իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս:

Ես այսօր չէի կամենա մեկ առ մեկ թվարկել այն բոլոր ազգային-եկեղեցական, ազգային-հայրենասիրական գործերը, որ Դուք իրականացրել եք այս տասնութ տարիների ընթացքում, որովհետև դրանք շատ են և մանավանդ հայտնի բոլորին:

Կուզենայի նշել, որ այդ մեծ գործերը, ազգաշեն գործերը, որի հեղինակն էիք Դուք անձնապես և շարունակում եք լինել, հնարավոր դարձավ նաև, թույլ տվեք ասելու, այն պատճառով, որ այս անցած բոլոր տարիների ընթացքում, մենք մեր հարաբերությունները, որպես հայ եկեղեցու գործերի խորհուրդ, և Դուք, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, իրականացրիք այն օրենքների սահմաններում, որոնք անասանորեն պահպանվեցին այս բոլոր տարիների ընթացքում, և թույլ տվեք հավատացնել, որ առաջիկա տարիների ընթացքում նույն ձևով դրանք կպահպանվեն:

Այս հանդիսավոր առիթով ուրախությամբ եմ նշում, որ այս 18 տարիների ընթացքում նաև Ձեր մեծ ջանքերով ստեղծվեց արդեն մի շատ հաստատուն կամուրջ Սովետական Հայաստանի և արտաշխարհի միջև և այժմ կապերը, ես աչքի առաջ ունեմ մեր հայահոծ գաղութները, ամրապնդվում են, ընդլայնվում են և առաջիկայում խոստանում են ավելի նոր և մեծ հեռանկարներ:

Ես ուրախությամբ եմ նշում նաև, որ վերջին տարիների ընթացքում, հատկապես մեր կառավարության անցկում ջանքերով արձանագրվեցին նոր մեծ հաջողություններ այն գործի մեջ, որը համաշխարհային նշանակություն ունի, որը կենսական նշանակություն ունի նաև մեր ժողովրդի համար: Դա խաղաղության նոր հաջողություններն են, որոնք արձանագրվեցին այնպիսի խոշոր երկրների հետ, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, ինչպես Ֆրանսիան է, ինչպես Արևմտյան Գերմանիան է, ինչպես Ճապոնիան է: Այս բոլորի մասին մենք այժմ ոչ միայն ազգային կատեգորիաներով ենք մտածում, այլև համաշխարհային չափանիշներով, միութենական չափանիշներով, որովհետև գիտենք, որ հայ ժողովրդի ճակատագիրը անխզելիորեն կապված է Սովետական Միության բոլոր ժողովուրդների ճակատագրի հետ:

Թույլ տվեք նաև այսօր նշելու, որ այդ մեծ և շնորհակալ գործին Դուք այս անցյալ տարիների ընթացքում մշտապես բերեցիք Ձեր հեղինակավոր մասնակցությունը և Ձեր հեղինակավոր խոսքը տարածեցիք աշխարհի բոլոր ամբիոններից, աշխարհի բոլոր երկրներում, ուր որ գտնվում էիք, և հայ ժողովրդի խաղաղության տենչանքը, նրա խաղաղասիրական ձգտումները հաղորդեցիք աշխարհի շատ ժողովուրդների:

Թույլ տվեք այս հանդիսավոր առիթով կրկին շնորհավորել Ձեզ, Ձերոջ Սրբություն, կամենալ Ձեզ քաջատողջություն, կամենալ Ձեզ, որպեսզի Ձեր բոլոր ծրագրերը, որոնք Դուք ունեք, քաջատողջ վիճակում, լավ տրամադրության մեջ և շրջապատված Ձեր օգնականներով կարողանաք առաջիկա տասնամյակների ընթացքում հաջողությամբ իրականացնել:

Կրկին շնորհավորում եմ Ձեզ, Վեհափառ, լավագույն ցանկություններով:

Վերջում շնորհակալության և օրհնության խոսք է ասում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ
ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
18-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ
(1973 թ. սեպտեմբերի 30)

Սրտագին շնորհակալություն պարտիմ հայտնել Մեր սիրեցյալ եղբոր՝ գերաշնորհ Սերովբե արքեպիսկոպոսին, որ այս հանդիսությանց մասնակցելու համար հատուկ ժամանել է Մայր Աթոռ զաղով Ֆրանսիայից, որը խոսեց մեր եկեղեցու հոգևոր դասի և հավատացյալների անունից: Էս անկեղծորեն գնահատում եմ սրբազանի խոսքը՝ վստահ լինելով, թե նրա խոսքը իրոք իր պայծառ անձնավորության անկեղծ արտահայտությունն է, ինչպես նաև արտահայտությունը Մեր բոլոր հոգևոր եղբայրների:

Կաղոթեմք, որ Աստված Մեր բոլոր հոգևոր և աշխարհական գործակիցներին, լինեն նրանք Հայաստանում թե արտասահմանում, շնորհի ուժ և անսպառ եռանդ, նորանոր ներշնչումներ, որպեսզի բոլորը շարունակեն իրենց պարտքը կատարելու՝ ի պայծառություն և ի ծաղկումն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ծնորհակալություն նաև մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանի մաղթանքների համար, մաղթանքներ, որոնք Մենք ջերմապես գնահատում ենք, որովհետև նրանք զալիս են իբրև հարազատ արտահայտությունները մեր հայրենաշեն կառավարության, որի արժանավոր ներկայացուցիչն է տիար Սարգիս Գասպարյան՝ իբրև նախագահը մեր եկեղեցու հետ կապը պահպանող պետական խորհուրդի: Իմ ձեռքը խղճիս վրա դրած, պետք է շնորհակալություն հայտնեմ ոչ միայն նրա խոսքի համար, այլ նաև նրա կատարած գործի՝ հոգուտ մեր եկեղեցական գործերի հաջող լուծման և ի խնդիր Մայր Աթոռի բոլոր հոգևոր, վարչական, կրթական ու շինարարական ծրագրերի հաջողությանց:

Պարզ է, ինչպես կրկնել եմ նաև այլ առիթներով, որ, եթե Մայր Աթոռ ս. Էջմիածին, չկարողանար օգտվել մեր հայրենի կառավարության բարյացակամ վերաբերմունքից և բարոյական օգնությունից, հազիվ թե մեզ հաջողվեր մեր իրագործումների մի մասը կատարել:

Խորապես մխիթարված ենք, որ մեր ժամանակներում, իմ գահակալության շրջանին մեր պետական ղեկավարները առաջնորդվում են, ինչ վերաբերում են մեր եկեղեցուն և ս. Էջմիածնին, այն ոգով, որը եղել է ավանդական ոգին դարերի ընթացքում, հայ եկեղեցու և հայ պետական իշխանությանց փոխհարաբերությանց տեսակետից:

Անշուշտ Հայաստանյայց եկեղեցին և Մայր Աթոռ ս. Էջմիածին անբաժանելի են մեր ժողովուրդից և այդ գիտակցությամբ է որ մեր առաքելությունը ուզում ենք շարունակել մեր ժողովուրդի կյանքի մեջ: Այդ նշանակում է՝ մեր առաքելությունը շարունակել նաև հոգուտ մեր վերածնված հայկական պետության:

Կրկին Մեր շնորհակալությունը մեծահարգ տիար Գասպարյանին և Մեր խնդրանքը, որ հարմար առիթով թարգմանը լինի մեր այս զգացմունքների մեր հայրենի կառավարության բարձր ներկայացուցիչների մոտ:

Երեկ և այսօր պատմական պահեր ապրեցինք մենք այստեղ՝ Մայր Աթոռում: Նախ, ինչպես դուք տեսաք տաճարում, Մենք ձեռնադրեցինք երիտասարդ չորս եպիսկոպոսներ, որոնք կոչված են շարունակելու իրենց հոգևոր առաքելությունը մեր եկեղեցու ծոցում առավել մեծ պատասխանատվությամբ: Վստահ ենք, թե նրանք մեր ժողովուրդի պատմության այս բավական ճա-



Տ. ԳՅՈՒՏ, Տ. ԱՐՄԵՆ, Տ. ՆԱՐԵԿ ԵՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՆՈՐԱՊԵՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ
ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ ՄՈՏ

կատագրական պահին, ինչպես եւ ընդգծեցի այդ տաճարում իմ խոսքի մեջ, նրանք պետք է իմանան ուղիղ հասկանալ իրենց առաքելությունը: Նրանք այլևս իրենց անձերին չեն պատկանում, այլ մեր ամբողջ եկեղեցու և ամբողջ ժողովուրդի ծառաներն են հանդիսանալու: Նրանց աշխատանքը պետք է մի ներդրում լինի մեր ընդհանուր գործի հառաջդիմության ճանապարհի վրա, մեր եկեղեցական, հոգևոր և ազգային-հայրենասիրական կյանքի հառաջընթացի ճանապարհի վրա: Այլապես համարյա նշանակությունից զուրկ կմնա հայ հոգևորականի կյանքը և գործունեությունը: Որպեսզի զգալի դարձնեն իմ այս մտածումը իմ խոսքի մեջ ոգեկոչեցի եղեռնը, հիշեցի Սարդարապատը: Եվ պետք է ավելացնեմ, որ Սարդարապատի ճակատամարտը շարունակվում է տակավին: Մեր ժողովուրդի առաջ բազում հարցեր են դրված, տակավին չլուծված, հատկապես եթե ի նկատի ունենանք մեր ժողովուրդի կեսի ճակատագիրը, ժողովուրդը, որ գտնվում է արտասահմանում:

Մենք չենք ուզում կոտորատվել: Չենք ուզում, որ մեր ժողովուրդը տկարանա կամ նվազի: Ահա այս նվիրական գործի ճանապարհին՝ հայ հոգևորականը այսօրվա կյանքի պայմանների մեջ, մանավանդ արտասահմանում, վճռական դեր ունի կատարելիք: Երանի թե մեր բոլոր հայ հոգևորականները այդ գիտակցությունը կարողանան ամբողջովին ըմբռնել, որպեսզի արժանանան մեր ժողովուրդի գնահատանքին և Աստուծո օրհնության:

Ես վստահ եմ, որ Մայր Աթոռիս այս չորս երիտասարդ միաբանները ա՛յդ ոգով պիտի ծավալեն իրենց աշխատանքն ու գործունեությունը:

Պատմական եղավ մեզ համար երեկվա օրը՝ մահ, սիրելի ժողովուրդ, որովհետև Մայր տաճարը օծվեց մոր և ոսկեփալ զանգակներով, մեծարժեք զանգակներ, որոնք պարզև կհանդիսանան վասպուրականցի Կարպիս Զրբաշյանի և նրա քրոջ՝ Ալիս Մոմջյանի, որոնք թեև ապրում են Փարիզում, բայց հոգով մեզ հետ են, այստեղ, հայրենի հողի վրա: Այս զանգակները պետք է հնչեն հետ այսու, ի հիշատակ նրանց վանեցի ծնողների՝ Մկրտիչի և Վեհանուշի, որոնք իրենց աչքերը փակեցին պանդխտության մեջ, հեռու Ադրասմարից, սակայն երազանքներով լեցուն: Ահա ա՛յդ երազանքների ճանապարհի վրա նրանց զավակները այսօր՝ Կարպիս և Ալիս, արտահայտում են իրենց զգացմունքները դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին և դեպի մայր հայրենիք՝ նվիրելով այս զանգերը, որոնք պետք է ուրախացնեն ոչ միայն մեզ և այն բոլոր ուխտավորներին, որոնք պետք է սերունդե սերունդ աղոթքի գան Մայր Աթոռ ս. Էջմիածին, այլ այդ զանգերի ձայնը ինչ-որ մի չափով պետք է մխիթարի և թերևացնի սուգը կիսավեր Ադրասմարի: Մենք ընդունում ենք այս պարզև Զրբաշյան ընտանիքից, խոր հուզումով, և աղոթում ենք նրանց բարեպաշտ ծնողաց հոգիների խաղաղության համար, նրանց զավակների արևշատության համար, նրանց բոլոր հայրենամկեր իղձերի լիակատար հաջողության համար:

Թող Աստված օրհնի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, թող Աստված օրհնի համայն ժողովուրդը մեր ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, թող Աստված օրհնի մեր վերածնված մայր հայրենիքը ամենայն հալոց. ամեն:

ՊԱԾՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ-ԾԱԾԿԵՐՈՒՅԹ

Սեպտեմբերի 30-ին, կիրակի օրը, ժամը 15-ին, Վեհարանում տեղի է ունենում պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ՝ Վեհափառ Հայրապետի գահակալության 18-րդ տարեդարձի ուրախ առիթով:



Հնդուներությանը ներկա են լինում տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Պարգել, տ. Վահան, տ. Գյուտ, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ սրբազանները և Մայր Աթոռի միաբանները:

Հրավիրյալների թվում էին՝ գահակալության հանդիսությունների առիթով ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Բյուրքյանները, Հակոբ Հսեֆյանը՝ Լոնդոնից, Կարպիս Զրբաշյանը՝ իր տիկնոջ և քրոջ՝ տկն. Ալիս Մոմջյանի հետ՝ Փարիզից, տեր և տիկին գորավար Արամ Գարամանուկյանները՝ Բեյրութից, Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ տեր և տիկին Օննիկ Ապանյանները և սիրված բանաստեղծ Գառնիկ Ադդարյանը՝ Բեյրութից:

Պատվո սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ է գրավել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Հնդուներությանը ներկա են լինում նաև այլ հրավիրյալներ, այդ թվում Արարատյան, Ծիրակի, վրահայոց թեմերի թեմական և եկեղեցական խորհուրդների ներկայացուցիչները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ղեկավար քարտուղար Պ. Ծահրազյանը:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Խանդավառ ու հայրենասիրական մթնոլորտում Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը շերտորեն շնորհավորում են տ. Սերովբե և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, Սարգիս Բյուրքյանը, գորավար Արամ Գարամանուկյանը, վրահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, գրող Սուրեն Աշճյանը և տ. Նորայր ավագ քին. Սարգսյանը՝ հանուն Ծիրակի թեմի:

Այնուհետև թեմերի անունից նվերներ են մատուցվում Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում, ի դեմս պրն. Սարգիս Գասպարյանի, հայրենի բարեխնամ կառավարության հայրենաշեն գործերի հաջողության համար՝ շեշտելով Իր երախտագիտությունը դեպի հայրենի կառավարությունը, Մայր Աթոռի գործերի հաջողության մեջ կարևորությամբ նշելով նրա բարոյական ու օրինական օժանդակությունը:

Այնուհետև Հայոց Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է բարձրացնել հայ հոգևոր դասի և, մասնավորաբար, նորապսակ չորս եպիսկոպոսների կենացը: Նորին Սրբությունն այս առթիվ շնորհավորում է նորապսակների՝ տալով նրանց եպիսկոպոսական պանակե, որպես եպիսկոպոսական իշխանության արտաքին նշան, և ցանկանում նրանց տեսնել հայ եկեղեցուն և հայ ժողովրդին լավագույն ծառայողների շարքում:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետին ուղղված շնորհակալական և երախտագիտության որդիական ջերմ խոսք են ասում նորապսակ սրբազանները՝ վերանորոգելով իրենց ուխտը աննսհանջ սիրով և անմնացորդ նվիրումով ծառայելու Մայր Աթոռ և Էջմիածնին և հայ ժողովրդին՝ Հայոց Հայրապետի օրհնության և ղեկավարության ներքո:

Այնուհետև Հայոց Հայրապետը բարեմաղթություններով բաժակ է բարձրացնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մայր Աթոռի հյուրերի և թեմական խորհուրդների անդամների կենացը՝ մաղթելով նրանց հաջողություն իրենց բարեգործական և թեմական գործունեության ճանապարհի վրա:

Սույն ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով: